

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ՓՎ/79-2021

ՀՀ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆԻ ՄՈՏ 2021
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 23-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ
ՄԻՋԱՆՑՔԻ, Մ-6, ՎԱՆԱՁՈՐ-ԱԼԱՎԵՐԴԻ-ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ
ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ (ԿՄ 38+450 - ԿՄ 90 + 191 ՀԱՏՎԱԾ)
ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ, ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՅՈՒՆ ՋԱՐԳԱՑՄԱՆ
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԵՎ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան

**Խորհրդի
անդամներ՝**

Ս. Պապիկյան	ՀՀ փոխվարչապետ, Խորհրդի նախագահ
Վ. Քերոբյան	ՀՀ էկոնոմիկայի նախարար
Գ. Սանոսյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար
Ռ. Պետրոսյան	ՀՀ շրջակա միջավայրի նախարար
Կ. Անդրեասյան	ՀՀ արդարադատության նախարար
Ք. Ղալեջյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալի պաշտոնակատար
Ս. Թովմասյան	Կադաստրի կոմիտեի ղեկավար
Հ. Սարգսյան	Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ (համաձայնությամբ, Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի շրջանակներում, ճանապարհաշինության բնագավառը համակարգող)
Ն. Մարտիրոսյան	«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ-ծրագրի ղեկավար (համաձայնությամբ)
Ս. Մաչյան	«Ճանապարհային դեպարտամենտ» պետական ոչ առևտրային կազմակերպության գլխավոր տնօրեն

Կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) նիստն իրականացվել է ս.թ. հուլիսի 23-ին գրավոր ընթացակարգով: ՀՀ փոխվարչապետի պաշտոնակատար, կառավարման Խորհրդի նախագահ Տ. Ավինյանի՝ ս.թ. հուլիսի 23-ի թիվ 04/03.17/24759-2021 գրությամբ Խորհրդի անդամներին ուղարկվել են օրակարգը և կից նյութերը՝ Խորհրդի անդամներին առաջարկելով իրականացնել գրավոր քվեարկություն:

Խորհրդի անդամների կողմից օրակարգի վերաբերյալ առարկություններ կամ առաջարկություններ չեն ստացվել, ուստի օրակարգը համարվել է հաստատված:

Համաձայն Խորհրդի աշխատակարգի 13-րդ կետի և սույն նիստի գրավոր քվեարկության արդյունքների՝ Խորհուրդն օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ կայացրեց հետևյալ որոշումը.

1. Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի Տրանշ 2-ի ՈւԳՊ/ՀՕՏԾ լրացման իրականացման խորհրդատվական ծառայությունների մատուցման թիվ ADB/NS/CS/CQS/2018-2 պայմանագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

Օրակարգի հարցի վերաբերյալ իրենց դիտարկումներն ու հարցադրումներն են ներկայացրել ՀՀ արդարադատության նախարարի պաշտոնակատարի պարտականությունները կատարող Ք. Գրիգորյանը և Կադաստրի կոմիտեի ղեկավար, խորհրդի անդամ Ս. Թովմասյանը: Խորհրդի մյուս անդամների կողմից դիտողություններ և առարկություններ չեն ներկայացվել:

Քննարկումների արդյունքում Խորհուրդը որոշեց՝

1. Հաստատել Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Տրանշ 2-ի ՈւԳՊ/ՀՕՏԾ լրացման իրականացման խորհրդատվական ծառայությունների մատուցման թիվ ADB/NS/CS/CQS/2018-2 պայմանագրի Փոփոխման կարգադրագիր թիվ 1-ին:
2. Համաձայնություն տալ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Տրանշ 2-ի ՈւԳՊ/ՀՕՏԾ լրացման իրականացման խորհրդատվական ծառայությունների մատուցման թիվ ADB/NS/CS/CQS/2018-2 պայմանագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ Համաձայնագիր թիվ 1-ի նախագծին:
3. «Ճանապարհային դեպարտամենտ» պետական ոչ առևտրային կազմակերպության գլխավոր տնօրեն Ս.Մաչյանին՝ գործող կարգին համապատասխան «Մեդիա Մոդել» ՍՊԸ ընկերության հետ սեղմ ժամկետում ստորագրել Պայմանագրի Համաձայնագիր թիվ 1-ը:
4. «Ճանապարհային դեպարտամենտ» պետական ոչ առևտրային կազմակերպության գլխավոր տնօրեն Ս.Մաչյանին՝ հնարավորինս սեղմ ժամկետում դիտարկումներ ներկայացրած գերատեսչություններին ներկայացնել համապատասխան պարզաբանումները և արդյունքները ներկայացնել Խորհրդի հաջորդ նիստին: